ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**110-19**

« 05» հունիսի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 05-ի թիվ 15 և 16 որոշումները:

Առդիր 2 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ**

# ՈՐՈՇՈՒՄ N 15

" 05 " հունիսի 2019 թ.

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդված 5-րդ կետով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 14.03.1997թվականի թիվ 51 որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումամբ, ՀՀ կառավարության 08.04.2004 թվականի թիվ 456-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Վահագնի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0118-0002 ծածկագրիով անշարժ գույքի՝ 0.34094 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասի և անասնագոմի տարանջատման սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0.14974 հա հողամասին և նույն հողամասում գտնվող 763.05 քմ շինություններին տրամադրել Վահագնի համայնք 6-րդ փողոց թիվ 47/1 փոստային հասցեն:

3. 06-103-0118-0002 ծածկագրից առանձնացված 0.1912 հա հողամասին և նույն հողամասում գտնվող 970.64 քմ շինություններին տրամադրել Վահագնի համայնք 6-րդ փողոց թիվ 47/2 փոստային հասցեն:

4.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների և պարտականությունների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար Ս.Կոստանդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ N 16

«05» հունվարի 2019 թ.

ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԵՑՄԱՆ, ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի թիվ 456-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 8-ի թիվ 456-Ն որոշումով /հավելված 3/ Վահագնի համայնքին համայնքային սեփականություն փոխանցված 06-103-0146-0001 ծածկագրով արոտավայրից առանձնացված 0.13008 հա գյուղատնտեսական նշանակության չորրորդ կարգի արոտավայրի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2.Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշմից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար Ս.Կոստանդյան